ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ-ն ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-26/26-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ3 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի			
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
10	Սվիտերներ	Սվիտերներ	Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ	Սվիտեր՝ ուսադիրներով և ՍԶ տարբերանշաններով Սվիտերի գործվացքի մակերեսային խտությունը պետք է կազմի 550-650 գ/մ2: Բաղադրությունը՝ բուրդ 30%, ակրիլ 70%: Գույնը՝ ըստ ներկայացված նմուշի մուգ կանաչ գունավորմամբ, ուսագոտին և արմնկի պաշտպանիչ օվալները ՀՀ ԱԱԾ ՍԶ երկգույն գունաքողարկող կտորով: Գործվածքը խիտ, չընթարձակվող (չլոճվող) ՝ առաջնային լվացում անցած: Գործվացքի բաղադրությունը՝ համաձայն ԳՈՍՏ 4659-79, ԻՍՕ 1833-2001, մակերեսային խտությունը՝ համաձայն ԳՈՍՏ 3811-72, ներկի կայունությունը՝ լվացման,թորած ջրի, քրտնքի և չոր շփման նկատմամբ, համաձայն ԳՈՍՏ 9733-83, նվազագույնը 4 բալ : Առաջամասի, հետնամասի և թևքերի գործվածքը ներքևից սկսվում է 6.9-7.1 սմ լայնության 1×1 տիպի կրկնակի մանժետով,

				որի առաջին շարքը ներգործվում է սպանդեքս տեսակի էլաստիկ թելով: Վզամասը՝ կլորավուն, մշակված 3.0 սմ լայնության մանժետով: Ուսամասերում և արմնկամասերում վրակարված են առնվազն 200 գ/մ2 մակերեսային խտությամբ սահմանապահ զորքերի քողարկող կտորով օվալաձև արմնկակալներ և ուսագոտով ուսակալներ: Կրծքամասի ձախ կողմում մշակվում է նույնպես առնվազն 200 գ/մ2 մակերեսային խտությամբ համապատասխան գունաքողարկված գործվածքից վրադիր կափույրով գրպան, որը կոճկվում է 14-15մմ տրամագծով մետաղական կոճգամով: Ուսերին վրակարված են կոճգամներով ամրացվող ուսադիրի սեպաձև կտրվածքով ախլակներ, որոնց վրա հագցված են առնվազն 200 գ/մ2 մակերեսային խտությամբ, 5.1սմ*10սմ չափսի նույն քողարկող կտորով, ասեղնագործ կոչումներով ուսադիրներ: Սվիտերի ձախ թևի ուսագլխից 90մմ ներքև ասեղնագործվում է ՀՀ ԱԱԾ տարբերանշանով կլոր թևքանշանը՝ վերևում հովհարաձև գրվածքով, աջ թևին ուսագլխից 90մմ ներքև ասեղնագործվում է ՀՀ ԱԱԾ ՍԶ տարբերանշանով կլոր թևքանշանը՝ վերևում հովհարաձև գրվածքով, (ըստ նմուշի): Փաթեթավորումն ու պիտակավորումը: Սվիտերի ներսամասից փակցվում է 3.5սմ*5սմ պիտակ, որի վրա պետք է նշված լինի արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման տարեթիվը, ծոծորակի հատվածում՝ չափսը: Փաթեթավորումը՝ եռաշերտ ստվարաթղթե արկղերով, մեկ արկղի մեջ՝ մինչև 10 հատ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի

				մեջ՝ 1հատ: Արկղերը՝ պիտակավորված, պիտակի վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսը, մատակարար և արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման տարեթիվը: Բոլոր չափսերի թույլատրելի շեղումը 3%: Սվիտերի արտաքին տեսքը՝ համաձայն Պատվիրատույի կողմից ներկայացվող նմուշի: Չափս հասակային (42/2 - 70/6), (չափսերի եվրոպական սանդղակով՝ XS - 5XL) և կոչումային (սերժանտականից - գեներալ-մայոր) տվյալները Կատարողին կտրամադրվեն պայմանագրի կնքումից հետո:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО Канакери кари фабрика в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԱԱԾ-ՏՆՏԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/26-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ3 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар			
	фирменное наименование	товарный знак	наименование производителя	технические характеристики
10				